Հավելված N 4
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
ապրիլի -ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) որակի ենթակառուցվածքի զարգացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 23-32.8-Ղ3-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետը անմիջական ենթակա և հաշվետու է Նախարարին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության Բաժինների պետերը:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության Բաժինների պետերից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. կազմակերպում է տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտների քաղաքականության մշակման գործընթացը և համակարգման աշխատանքները.

2. կազմակերպում է տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման գործընթացներում, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտներում նախարարության այլ ստորաբաժանումների, պետական կառավարման մարմինների, մասնագիտացված կառույցների, գործարար միջավայրի, օտարերկրյա և/կամ միջազգային կազմակերպությունների համագործակցության աշխատանքները՝ նպաստելով ոլորտային համատեղ զարգացման ծրագրերի ձևավորմանը.

3. կազմակերպում է նախարարության իրավասության ոլորտների նոր տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման, գործող տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և

հավատարմագրման ոլորտներում իրավական կարգավորումների վերանայման գործընթացը.

4. կազմակերպում է չափագիտության և ստանդարտացման, հավատարմագրման ազգային մարմինների գործունեության համակարգման աշխատանքները և դրանց մշտադիտարկումը.

5. կազմակերպում է ԵԱՏՄ, ԱՊՀ և այլ շրջանակներում ոլորտային համաձայնագրերի և պայմանագրերի վավերացման գործընթացը և ոլորտային կառույցների հետ հուշագրերի կնքումը.

6. կազմակերպում է պետության կողմից կանոնակարգվող ոլորտներում համապատասխանության գնահատման մարմինների նշանակման գործընթացը, նշանակված համապատասխանության գնահատման մարմինների ցանկի հրապարակումը նախարարության պաշտոնական կայքում, ցանկի շարունակական արդիականացումը, համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանի վարման աշխատանքները.

7. կազմակերպում է համապատասխանության գնահատման մարմինների նշանակման բողոքարկման հետ կապված գործընթացը, ինչպես նաև համապատասխանության գնահատման մարմինների նշանակման բողոքարկման գրանցամատյանի վարման աշխատանքները.

8. կազմակերպում է արտադրանքի ցուցանիշների չափումների (փորձարկումների) ճշգրիտ արդյունքներ ապահովող էտալոնային (արբիտրաժային կամ ռեֆերենսային) լաբորատորիաների ճանաչման գործընթացը.

9. կազմակերպում է ոլորտային միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման, տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտներում համապատասխան համադրությունների իրականացման, բարենպաստ իրավական կարգավորումների և առաջարկությունների մշակման գործընթացը.

10. կազմակերպում է ԵԱՏՄ շրջանակներում նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման կամ հավատարմագրման ոլորտները կարգավորող փաստաթղթերի կամ գործող տեխնիկական կանոնակարգերում, համապատասխանության գնահատման ընթացակարգերում, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման կամ հավատարմագրման ոլորտները կարգավորող փաստաթղթերում փոփոխությունների կատարման գործընթացը և դրանում համապատասխան ներկայացուցչի ընդգրկվածությունը և մասնակցությունը.

11. կազմակերպում է պետական կառավարման մարմինների, ինչպես նաև այլ գերատեսչությունների կողմից ներկայացվող ոլորտային իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրման, ՀՀ օրենսդրության կատարելագործման նպատակով ոլորտային իրավական ակտերի նախագծերի մշակման և դրանց վերաբերյալ սահմանված կարգով առաջարկությունների ներկայացման աշխատանքները.

12. կազմակերպում է Հայաստանի Հանրապետության և ԵՄ, ԵԱՏՄ, ԱՊՀ, ինչպես նաև միջազգային պայմանագրերին (կառույցներին) անդամակցելու արդյունքում (դրանց առկայության դեպքում) առաջացող տեխնիկական խոչընդոտների ոլորտի օրենսդրությունների ուսումնասիրության, ՀՀ գործող իրավական կարգավորումների հետ համադրության իրականացումը, առկա տարբերությունների բացահայտման և հնարավոր լուծումների առաջադրման աշխատանքները.

13. կազմակերպում է ԵԱՏՄ, ԵՄ, ՀՀ գործող և նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտներում իրավակարգավորումներին առնչվող, ինչպես նաև ոլորտային խնդիրներին լուծումներ տալու նպատակով շահագրգիռ մարմինների և գործարար միջավայրի ներկայացուցիչների հետ համատեղ համապատասխան քննարկումները, տեսակոնֆերանսները.

14. կազմակերպում է ԵՏՀ Կոլեգիայում, Խորհրդատվական կոմիտեում և ԵՏՀ Խորհրդում քննարկվող ոլորտային հարցերի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշման ձևավորման և ներկայացման աշխատանքները.

15. կազմակերպում է մասնակցությունը տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի նկատմամբ սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումներին.

16. կազմակերպում է մասնակցությունը արտադրանքի անվտանգությանը, դրա նկատմամբ վերահսկողական գործառույթներին և սպառողների շահերի պաշտպանությանն առնչվող քաղաքականության մշակման, տեսչական մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրման և առաջարկությունների ներկայացման աշխատանքներին.

17. կազմակերպում է համապատասխանության գնահատման մարմինների կողմից իրականացված գործունեության եռամսյակային տեղեկատվության հավաքագրման, ամփոփման և համապատասխան մարմիններին տրամադրման աշխատանքները.

18. կազմակերպում է ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտներում Նախարարության ենթակայությամբ գործող մարմինների կողմից իրականացված գործունեության եռամսյակային հաշվետվությունների հավաքագրման ու ամփոփման, որակական և քանակական վերլուծությունների հիման վրա եզրակացությունների կազմման, ինչպես նաև համապատասխան մարմիններին տրամադրման գործընթացները.

19. կազմակերպում է անվտանգ արտադրանքի ներքին և արտաքին շուկաներ մուտք գործելու խոչընդոտների վերացմանն ուղղված աշխատանքները.

20. կազմակերպում է վարչության ոլորտներին առնչվող գործառույթների, խնդիրների կարգավորման, դրանց վերաբերյալ մասնագիտական պարզաբանումների, վերլուծությունների, պատասխանների պատրաստման, տեխնիկական կանոնակարգերի ամբողջական կիրարկումն ապահովելու նպատակով գործող տեխնիկական կանոնակարգերի շարունակական մշտադիտարկման և ըստ անհրաժեշտության

համապատասխան զեկուցագրերի, հաշվետվությունների, առաջարկությունների մշակման և ներկայացման աշխատանքները.

21. կազմակերպում է տարածաշրջանային և միջազգային հավատարմագրման կազմակերպությունների հետ (EA, ILAC,IAF) հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված երկկողմ և բազմակողմ ճանաչման համաձայնագրերի կնքմանն և հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված աշխատանքները.

22. կազմակերպում է ՀՀ-ում հավատարմագրման և համապատասխանության գնահատման գործընթացների էլեկտրոնային համակարգի հետ կապված աշխատանքները.

23. կազմակերպում է ՀՀ-ում միջազգային ճանաչում ունեցող տրամաչափարկման լաբորատորիաների ստեղծմանն ուղղված աշխատանքները.

24. կազմակերպում է փորձարկման լաբորատորիաների կողմից իրականացվող լաբորատոր փորձարկումների հասանելիության և մատչելիության բարձրացմանը, ինչպես նաև հիմնական արտահանման շուկաներում համապատասխանության գնահատման փաստաթղթերի ճանաչելիությանն ուղղված աշխատանքները.

25. կազմակերպում է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման համար սահմանված ժամկետում որակի ենթակառուցվածքի բաղկացուցիչ մաս հանդիսացող ոլորտներին առնչվող պայմանագրերի մշակման և հաստատման, ազգային մարմինների կողմից հաշվետվությունների ընդունման, եզրակացությունների պատրաստման աշխատանքները.

26. կազմակերպում է ոլորտային միջնաժամկետ ծախսային ծրագրերի և բյուջետային հայտերի նախապատրաստման և դրանց ներկայացման աշխատանքները.

27. կազմակերպում է Համաշխարհային բանկի վարկային ծրագրի, ԵՄ (CEPA, OIML, PTB) շրջանակներում սահմանված բաղադրիչների մասով միջոցառումների կատարման աշխատանքները.

28. կազմակերպում է ստանդարտների մշակման պետական ամենամյա ծրագրի մշակման և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելու, սահմանված ստանդարտների մշակման գործընթացի մասով հսկողության առնչվող աշխատանքները.

29. կազմակերպում է տեխնիկական կանոնակարգերի ամբողջական համապատասխանության գնահատման նպատակով համապատասխանության գնահատման «բաց» ոլորտների ուսումնասիրման, ներդրումային ծրագրերի առաջարկությունների (փաթեթների) ձևավորման և հրապարակման աշխատանքների իրականացումը.

30. կազմակերպում է տեխնիկական կանոնակարգման կիրարկումն ապահովող միջազգային, տարածաշրջանային և ազգային ստանդարտներին, տեխնիկական պայմաններին, համապատասխանության գնահատման ընթացակարգերին առնչվող համապատասխանության գնահատման մարմիններից ստացված խնդիրների ուսումնասիրման աշխատանքները և դրանց կարգավորմանն ուղղված առաջարկությունների

ներկայացումը ԵՏՀ:

Իրավունքները՝

- պահանջել որակի ենթակառուցվածքների բաղկացուցիչ մաս հանդիսացող ոլորտներում միջազգային կառույցներից՝ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ), Եվրոպական Միության (ԵՄ), Անկախ պետությունների (ԱՊՀ), ինչպես նաև միջազգային այլ կազմակերպություններից անհրաժեշտ փաստաթղթեր.
- պահանջել ազգային որակի ենթակառուցվածքների զարգացման հեռանկարային ուղղվածության ապահովման և գոյություն ունեցող համակարգի բարեփոխման աշխատանքների իրականացման համար ոլորտները կանոնակարգող համապատասխան շահագրգիռ մարմիններից, չափագիտության, ստանդարտացման և հավատարմագրման ազգային մարմիններից անհրաժեշտ տեղեկատվություն, հիմնավորումներ, փաստաթղթեր.
- կազմակերպել չափագիտության, ստանդարտացման և հավատարմագրման ազգային մարմինների, միջազգային կառույցների, տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ աշխատանքային քննարկումներ.
- ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման և հավատարմագրման բնագավառներին առնչվող օրենսդրական և իրավական ակտերի նախագծերի մշակման համար.
- ստեղծել աշխատանքային խումբ համապատասխան շահագրգիռ մարմինների ներկայացուցիչներից՝ ստանդարտները, մեթոդիկաները, համապատասխանության գնահատման ընթացակարգերը արդիականացնելու նպատակով.
- ստանալ առաջարկություններ, եզրակացություններ, անհրաժեշտ փաստաթղթեր տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի նկատմամբ անվտանգությանը, մակնշմանը, արտադրմանը և շուկայահանմանը ներկայացվող արդի պահանջների ներդրման վերաբերյալ.
- պահանջել հիմնավորումներ, լրացուցիչ տեղեկատվություն համապատասխանության գնահատման մարմինների նշանակման գործընթացի հստակեցմանն ու ներկայացված փաստաթղթային ուսումնասիրությանն ուղղված աշխատանքների կազմակերպման նպատակով.
- կազմակերպել քննարկումներ, տեսակոնֆերանսներ ԵԱՏՄ, ԵՄ, ՀՀ գործող/վերանայման ենթակա կամ նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի վերաբերյալ.
- կազմակերպել քաղաքացիների ընդունելություն որակի ենթակառուցվածքի բաղկացուցիչ մաս հանդիսացող ոլորտներին առնչվող խնդիրների վերաբերյալ պարզաբանումներ ներկայացնելու նպատակով:

Պարտականությունները՝

- հետևել Որակի ենթակառուցվածքների զարգացման քաղաքականության մշակման և

ստանդարտացման, չափագիտության, տեխնիկական կանոնակարգման, հավատարմագրման և համապատասխանության գնահատման ոլորտների միջազգային համակարգերին ինտեգրման աշխատանքներին.

- ամփոփել որակական և քանակական վերլուծությունների հիման վրա եզրակացությունները.
- ամփոփել պետական պատվերի շրջանակներում ստանդարտացման ծրագրում ներառված և մշակված ստանդարտների մասով համապատասխան եզրակացություններ.
- ուսումնասիրել և վերլուծել տեխնիկական կանոնակարգման, ստանդարտացման, չափագիտության, հավատարմագրման և համապատասխանության գնահատման ոլորտները կանոնակարգող միջազգային, ԵԱՏՄ և ԱՊՀ օրենսդրության և գործելակերպերի ներդաշնակեցմանն ուղղված աշխատանքները.
- հսկել համապատասխան միջազգային, տարածաշրջանային կազմակերպություններին ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման ազգային մարմինների գլոբալ ինտեգրմանն և որակի ենթակառուցվածքի ծառայությունների միջազգային ճանաչմանն ուղղված աշխատանքները.
- ամփոփել և ներկայացնել առաջարկ համապատասխանության գնահատման մարմիններին նշանակելու վերաբերյալ, ինչպես նաև նշանակման կասեցման կամ չեղյալ հայտարարման վերաբերյալ.
- հսկել որակի ենթակառուցվածքների բաղկացուցիչ մաս հանդիսացող ոլորտների արդիականացման աշխատանքները ԵԱՏՄ և ԵՄ համանման օրենսդրությանը.
- պարզաբանումներ տալ տեխնիկական կանոնակարգման, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, հավատարմագրման և համապատասխանության գնահատման ոլորտներին առնչվող հարցերին:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիտորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում

5. Խնդիրների լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Ժամանակի կառավարում
5. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
6. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
7. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մի քանի ոլորտների համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մի քանի ոլորտների համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: